



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“08” 2024թ.

N..... 07-2

Հ Ր Ա Մ Ա Ն

ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ, ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 4.2-րդ հոդվածի 1-ին մասի 4.1)-ին կետի դրույթներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել աղբավայրերի նախագծման, կառուցման և շահագործման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

5/8/2024

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝

Signed by: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Երևան

ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ, ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳ

1. Կիրառման ոլորտը

- Սույնով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքում կոշտ կենցաղային թափոնների աղբավայրերի նախագծման, կառուցման և շահագործման գործընթացները:
- Սույն կարգը սահմանվում է էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովման, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբավայրերի բացասական և վտանգավոր ներգործության չեզոքացման ու չեզոքացման նպատակով:
- Սույն կարգը չի տարածվում արտադրական, ռադիոակտիվ, ընդերքօգտագործման և բժշկական թափոնների թաղման/հեռացման վայրերի վրա:

2. Ընդհանուր դրույթներ

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական և վտանգավոր ներգործության չեզոքացման նպատակով՝ կոշտ կենցաղային թափոնները մեկուսացվում և անվտանգ տեղադրվում են աղբավայրերում՝ կանխարգելիչ շրջակա միջավայրում վտանգավոր և աղտոտող նյութերի տարածումը:
- Սույն կարգը պարունակում է հիմնական դրույթներ, որոնք պետք է պահպանվեն աղբավայրերի նախագծման, կառուցման և շահագործման գործընթացներում՝ բնապահպանական, քաղաքաշինական և սանիտարական պահանջների ապահովման նպատակով:
- Աղբավայրերի կառուցման կամ շահագործման գործունեությունները ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի:

3. Աղբավայրի նախագծում

7. Նոր կառուցվող աղբավայրի նախագիծը կազմվում է ՀՀ գործող օրենսդրությանն ու նորմերին համապատասխան, որն իր մեջ ներառում է.

1) ընդհանուր բացատրագիրը,

2) հիդրոերկրաբանական եզրակացությունը և շինարարության համար ընտրված տարածքի հիմնավորումը,

3) գլխավոր հատակագիծը՝ ներառյալ տրանսպորտը և սանիտարական պահպանման գոտին,

4) տեխնոլոգիական բաժինը՝ տարողության հաշվարկը, տեխնոլոգիական սխեման՝ հաշվի առնելով շինարարության հերթականությունը, երկայնական և լայնական տեխնոլոգիական կտրվածքները, շահագործման ռեժիմը, շահագործող անձնակազմի, մեքենաների և մեխանիզմների պահանջարկի հաշվարկը, աղբավայրի փակումից հետո հողամասի վերականգնման (ռեկուլտիվացիայի) ցուցումները,

5) ճարտարապետաշինարարական բաժինը,

6) սանիտարատեխնիկական բաժինը,

7) էլեկտրատեխնիկական բաժինը,

8) հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները,

9) շրջակա միջավայրի պահպանության/ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման բաժինը,

10) ամփոփ նախահաշիվը,

11) այլ բաժիններ՝ ըստ նախագծային առաջադրանքի:

4. Հողատարածքի ընտրություն

8. Աղբավայրերը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության (կատեգորիաների) կոմունալ օբյեկտների գործառնական նշանակության հողամասեր են՝ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 6 -րդ հոդվածի 1.4-րդ կետի, 18-րդ հոդվածի:

9. Տեղական ինքնակառավարման մարմինները համայնքի վարչական սահմանում և համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծին, քաղաքաշինական գոտիավորման նախագծին ու հողերի օգտագործման սխեմային համապատասխան նոր աղբավայրի կազմակերպման համար ընտրված հողամասը համաձայնեցնում են լիազոր մարմինների՝ ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ առողջապահության

նախարարությունների, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և տարածքային կառավարման մարմինների հետ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Նոր կառուցվող աղբավայրերը տեղակայվում են.

1) բնակավայրերի սահմաններից դուրս՝ բնակելի կառուցապատումներից նվազագույնը 500 մետր հեռավորության վրա /սանիտարապաշտպանիչ գոտի/,

2) ջրամբարների, մակերևութային ջրերի, բնության հատուկ պահպանվող տարածքների, առողջարանների և այլ նման օբյեկտների սանիտարական պահպանման գոտիներից դուրս տարածքներում,

3) ստորգետնյա ջրերի մակարդակը 2 մետրից ավելի խորության վրա գտնվող տարածքներում, ինչպես նաև ստորգետնյա ջրերի աղտոտումը բացառող բնական պաշտպանվածությամբ տարածքներում,

4) գյուղատնտեսության համար ոչ պիտանի, ինչպես նաև կանաչ ծառատունկերով չզբաղեցված տարածքներում,

5) ձորակներում և օգտագործված բացհանքերում,

6) բնակելի կառուցապատման, հանգստի գոտիների և բնակչության զանգվածային կուտակման այլ հանրային վայրերի նկատմամբ քամու գերակշռող ուղղությանը հակառակ մասերում,

7) Հիդրոերկրաբանական տեսանկյունից նախընտրելի՝ կավից կամ ծանր ավազակավից բաղկացած գրունտերով տարածքներում:

11. Աղբավայրերը չեն կարող տեղակայվել՝

1) ջրամատակարարման, հանքային ջրերի աղբյուրների սանիտարական պահպանման I, II և III գոտիներում, գետերի ողողահունների գոտիներում,

2) սողանքների, սելավատարերի, ձնահյուսերի գոտիներում, սեզոնային հեղեղումների ենթարկվող տարածքներում և ճահճակալած վայրերում,

3) հատուկ պահպանվող տարածքներում,

4) օդանավակայաններից 15 կմ-ից պակաս հեռավորության վրա,

5) զբոսայգիների, պուրակների, այգիների և այլ կանաչ տարածքներում:

12. Ելնելով տեղադրման դիրքից և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունից՝ աղբավայրերը կարող են լինել՝

1) հարթավայրային՝ հարթ մակերևույթի նկատմամբ մինչև 5% թեքությամբ,

2) լանջային՝ հարթ մակերևույթի նկատմամբ 5%-ից բարձր թեքությամբ,

3) ձորակային՝ բնական իջվածքներում և ձորերում տեղակայված,

4) հանքային՝ օգտագործված բացհանքերում տեղակայված:

13. Տնտեսապես առավել շահավետ է ընտրել օգտագործված բացահանք կամ քառակուսու ձև ունեցող տեղամաս, որոնց դեպքում հնարավոր է ստանալ աղբի պահեստավորման առավել մեծ բարձրություն (հաշվի առնելով շեպի թեքությունը 1:4):

14. Աղբավայրի համար տարածքի ընտրությունից հետո կատարվում են տեղագրական հանույթ, երկրաբանական և հիդրոերկրաբանական հետազննություններ:

15. Երկրաբանական հետազննությունը կատարվում է առնվազն 10 մ խորությամբ: Տարատեսակ գրունտների առկայության դեպքում հետազոտումը կատարվում է մինչև անջրանցիկ (ջրահեստ) շերտին հասնելը և խորանալով այդ շերտի մեջ 1-ից մինչև 1.5 մ:

16. Հիդրոերկրաբանական հետազննության արդյունքում որոշվում է գրունտային ջրերի հորիզոնը և դրանց հոսքի ուղղությունը:

5. Աղբավայրի տարողության հաշվարկ

17. Նախագծվող աղբավայրի համար կատարվում է տարողության հաշվարկ՝ անհրաժեշտ տարածքի մակերեսի հիմնավորման նպատակով:

18. Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում մեկ շնչի հաշվով գոյացող աղբի տարեկան նորման (ներառյալ այլ աղբ գոյացնող կազմակերպություններում առաջացող աղբը), սպասարկվող բնակչության թիվը, աղբավայրի շահագործման հաշվարկային ժամկետը և աղբավայրում աղբի խտացման աստիճանը:

19. Աղբավայրերի հաշվարկային տարածքը որոշելու համար ընդունվում է 0.02-ից մինչև 0.05 հա տարեկան մեկ հազար տոննա աղբի հաշվարկով: Աղբավայրի համար պահանջվող տարածքի մեծությունը պետք է հիմնավորվի աղբավայրի նախագծային տարողության հաշվարկով:

20. Աղբավայրի համար տարածքի շահագործման ժամանակահատվածը որպես կանոն ընդունվում է ոչ պակաս 15-20 տարի:

21. Աղբի պահեստավորման անհրաժեշտ տարածքը որոշվում է աղբավայրի կանխատեսվող ծավալը բաժանելով թափոնների պահեստավորման միջին բարձրության վրա՝ հաշվի առնելով դրանց խտությունը:

$$V = D/P:$$

22. Իսկ կանխատեսվող ծավալը որոշվում է

$$D = P \times 1,3 \times S / q, \text{ որտեղ}$$

D ՝ ծավալն է,

P ՝ սպասարկվող բնակչության թիվը,

1,3՝ մեկ շնչին ընկնող աղբի կուտակման հաշվարկային ծավալն է՝ խ.մ-ով,

Տ՝ աղբավայրի շահագործման հաշվարկային ժամկետն է, տարով,
Գ՝ աղբի խտացման գործակիցն է, որի միջին հաշվարկային մեծությունը
հավասար է 3-ի:

Օրինակ՝ 80 հազար բնակչությամբ, շահագործման ժամկետը 25 տարի, աղբի խտացման գործակիցը՝ 3, աղբի պահեստավորման բարձրությունը՝ 10 մ-ի դեպքում ելակետային տվյալներով հաշվարկային տարածքի մակերեսը կկազմի՝ $=80000 \cdot 1,3 \cdot 25/3 / 10 = 86\,666$ մ² = 8,7 հա:

6. Աղբավայրի սխեման

23. Կառուցվող աղբավայրը բաղկացած է կոշտ կենցաղային թափոնների պահեստավորման տարածքից, որը զբաղեցնում է ընդհանուր տարածքի 90 տոկոս և ավելին, տնտեսական գոտուց, մուտքից և մուտքի ճանապարհից, ինժեներական կառուցվածքներից և հաղորդակցուղիներից :

24. Մուտքի ճանապարհը միացնում է աղբավայրը գլխավոր խճուղու հետ, այն հաշվարկվում է երկկողմ շարժման համար: Մուտքի ճանապարհի կատեգորիան և հիմնական ցուցանիշները որոշվում են մեքենաների շարժման հաշվարկային հաճախականության հիման վրա՝ ավտոմեքենա/օր:

25. Կախված տարեկան ընդունվող աղբի ծավալից պահեստավորման տեղամասը բաժանվում է շահագործման հատվածների/բջիջների՝ այն հաշվով, որ յուրաքանչյուր հատվածը պետք է բավարարի աղբի ընդունումը 3-ից մինչև 5 տարի ժամանակահատվածում:

26. Շահագործման հաջորդ հատվածը իրականացվում է աղբի լիցքի ավելացմամբ մինչև նախագծային նիշը:

27. Պահեստավորման տարածքի նշահարումը ըստ հատվածների կատարվում է հաշվի առնելով տեղանքի ռելիեֆը:

28. Աղբավայրի պահեստավորման տեղամասը պետք է պաշտպանված լինի մակերևութային ջրերի ներթափանցումից: Այդ նպատակով տեղամասի սահմանի վրա նախագծվում է ջրահեռացման առվակ, որի կտրվածքը հաշվարկվում է մթնոլորտային տեղումների և ջրհավաք մակերեսի տվյալների հիման վրա:

29. Ջրահեռացման առվակից 1-ից մինչև 2 մ հեռավորության վրա տեղադրվում է աղբավայրը շրջափակող ցանկապատը (լարային, ցանցային կամ համանման):

30. Ցանկապատից 5-ից մինչև 8 մ լայնությամբ գոտում նախատեսվում են ծառատնկում, կանաչապատում, տեղադրում են ջրմուղ-կոյուղու ցանցերը,

էլեկտրալուսավորության սյուները, ինչպես նաև թափոնների ծածկման (մեկուսացման) համար նախատեսված գրունտի պահեստները:

31. Տնտեսական գոտին նախագծվում է մուտքի ճանապարհի և աղբավայրի սահմանի հետ հատման մասում:

32. Տնտեսական գոտում տեղադրվում են կենցաղային և արտադրական շինություններ: Տնտեսական գոտին կարող է զբաղեցնել ընդհանուր տարածքի 5%-ից մինչև 10%-ը:

33. Աղբավայրի տարածքում կարող են նախատեսվել թափոնների տեսակավորման և վտանգավոր թափոնների առանձնացման, ինչպես նաև օրգանական թափոնների կոմպոստավորման և կոմպոստի պահեստավորման տեղամասեր՝ համապատասխան տեխնիկա-տնտեսական հիմնավորման դեպքում:

34. Աղբավայրի տարածքում կարող են նախատեսվել նաև վտանգավոր թափոնների ընդունման, մշակման, վերամշակման, օգտահանման, փասազերծման, թաղման տեղամասեր:

7. Աղբի պահեստավորման տեղամաս

35. Պահեստավորման տեղամասում նախատեսվում է փոսորակի կառուցում, որի արդյունքում առաջացող գրունտը պահեստավորվում է աղբի միջանկյալ և վերջնական մեկուսացման համար: Աղբավայրի համար կառուցվող փոսորակի միջին խորությունը հաշվարկվում է ելնելով հողային աշխատանքների և ստորգետնյա ջրերի մակարդակի հաշվեկշռի պահանջներից:

36. Առաջին հատվածի/բջջի փոսորակներից գրունտը տեղադրվում է աղբավայրի պարագծով նախատեսված պահեստներում, իսկ երկրորդ և երրորդ հատվածների փոսորակներից առաջացող գրունտը օգտագործվում է առաջին և երկրորդ հատվածներում թափոնների մեկուսացման համար:

37. Փոսորակի հիմքը որպես կանոն նախագծվում է հորիզոնական՝ ապահովելով առաջացող գտահեղուկի հավասարաչափ բաշխումը աղբավայրի հիմքի ամբողջ տարածքով: Հաշվի առնելով տեղանքի ռելիեֆը և աղբի պահեստավորման հերթականությունը, տարածքը կարող է բաժանվել մի շարք փոսորակների: Տարածքի 5%-ից ավելի թեքության դեպքում կարող են նախատեսվել աստիճանաձև տեղակայված փոսորակներ:

38. Փոսորակների հիմքը պետք է ունենա կապակցված գրունտե շերտ՝ ոչ պակաս 0.5 մ հաստությամբ և ոչ ավել 10-5սմ/վրկ (0.0086 մ/օր) ջրանցման գործակցով (կավային գրունտներ բնական վիճակում):

39. Փոստրակի հիմքի գրունտի 10-5 սմ/վրկ ավելի ջրանցման գործակցի դեպքում անհրաժեշտ է նախատեսել արհեստական ջրանթափանց շերտերի (էկրան) ստեղծում թաղանթային կամ մածուցիկ ջրամեկուսիչ նյութերի օգտագործմամբ:

40. Այն կլիմայական գոտիներում, որտեղ աղբի խոնավությունը չի գերազանցում 52%-ը և տարեկան մթնոլորտային տեղումների քանակը 100 մմ-ից պակաս է ջրանթափանց շերտ կարող է չնախատեսվել:

41. Օգտագործված հանքերում (քարհանքներում) աղբավայրի նախագծման դեպքում նախատեսվում են աղբատար մեքենաների մուտքը և բեռնաթափումը ամենացածր նիշում ապահովող ճանապարհներ (իջատեղեր), ինչպես նաև թափոնների մեկուսացման համար գրունտի ստացման տեղամաս:

42. Խրամուղային եղանակով աղբավայր նախագծելու դեպքում նախատեսվում են խրամուղիներ 3-ից մինչև 6 մ խորությամբ և վերին մասում 6-ից մինչև 12 մ լայնությամբ: Խրամուղիները նախատեսվում են քամիների գերիշխողբուղղությանը ուղղահայաց:

43. Խրամուղիներից հանված գրունտը օգտագործվում է աղբի շերտերի մեկուսացման համար:

44. Տեղադրվում են խտացված աղբի զանգվածում առաջացող գազերի հավաքման և օգտահանման, ինչպես նաև գտահեղուկի հավաքման համակարգեր:

8. Տնտեսական գոտի և ինժեներական կառուցվածքներ

45. Տնտեսական գոտում նախատեսվում են վարչական և կենցաղային մասնաշենքեր, վերահսկման և բացթողման կետ, կշեռք, աղբի տեսակավորման և վերամշակման արտադրամասեր, փակ և բաց ավտոկայանատեղեր, մեքենաների և մեխանիզմների նորոգման արհեստանոցներ, պահեստներ, էլեկտրասնուցման, ջրամատակարարման և ջրահեռացման օբյեկտներ և այլ կառուցվածքներ:

46. Տնտեսական գոտու տարածքը պետք է ունենա կոշտ ծածկ, լուսավորություն, մուտքի ճանապարհներ և ցանկապատ:

47. Հրդեհների մարման համար պահանջվող ջրի ծախսը ընդունվում է 10 լ/վրկ, որի համար ելնելով տեղական պայմաններից կարող է նախատեսվել 50 մ³ ծավալով ջրամբար կամ լճակ:

48. Աղբավայրի ամբողջ եզրագծով նախատեսվում է ցանկապատ, որի բարձրությունը պետք է լինի առվազն 2 մ և աղբավայրի մուտքի մոտ նախատեսվում է դարպաս կամ ուղեփակոց:

9. Մոնիթորինգի կետեր

49. Աղբավայրի նախագծի կազմում մշակվում է մոնիթորինգի հատուկ բաժին, որը ներառում է ստորգետնյա և մակերևութային ջրերի, մթնոլորտային օդի, հողի և բույսերի վիճակի հսկողության և վնասակար ազդեցության կանխարգելման միջոցառումներ:

50. Ստորգետնյա ջրերի վիճակի հսկողության համար նախատեսվում են հսկիչ հորեր կամ հորատանցքեր ստորգետնյա ջրերի հոսքի ուղղությամբ՝ մեկ հսկիչ կառուցվածք աղբավայրի վերին (բարձր) հարակից տարածքում և 1-ից մինչև 2 հսկիչ կառուցվածքներ՝ աղբավայրի ներքին հատվածում՝ 50-ից մինչև 100 մ հեռավորության վրա:

51. Մակերևութային ջրերի վիճակի հսկողության համար նախատեսվում են աղբավայրի վերին (բարձր) հարակից տարածքում գտնվող մակերևութային ջրերից և աղբավայրի ներքին հատվածում գտնվող ջրահեռացման առվակներից ջրի նմուշներ վերցնելու կետեր:

52. Ստորգետնյա և մակերևութային ջրերի որակի հսկման կառուցվածքների համար նախատեսվում է մոտեցման ավտոմատացման սարքեր և ջրի հեռացման հնարավորություն:

53. Մթնոլորտային օդի վիճակը հսկելու համար նախագծով նախատեսվում են օդի նմուշները վերցնելու հատվածները՝ սանիտարական պահպանության սահմաններին և աղբավայրի աշխատանքային ու տնտեսական գոտիներում:

54. Աղբավայրի շահագործման ընթացքում մոնիթորինգն իրականացվում է «Աղբավայրերի մոնիթորինգի իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման դրույթներին համապատասխան:

10. Աղբավայրի շահագործումը

55. Աղբավայրերի շահագործումն իրականացվում է նախագծին համապատասխան՝ պահպանելով սանիտարական, քաղաքաշինական, բնապահպանական օրենսդրության պահանջները:

56. Շահագործման ժամերը սահմանվում են աղբահանության ժամանակացույցի համապատասխան և հաշվի առնելով աղբի փոխադրման տարածությունները:

57. Աղբավայրը պետք է շահագործվի շաբաթը 7 օր ժամը 6.00-22.00՝ երկու հերթափոխով՝ յուրաքանչյուրը 8 ժամ:

58. Շահագործման ժամերը կարող են փոփոխվել՝ կախված աղբի առաջացման սեզոնային հաճախականությունից:

59. Աղբավայրի մուտքի մոտ տեղադրվում են շահագործող ընկերության անվանումը, պատասխանատու կոնտակտային անձի անունը և հեռախոսի համարը, նշումներ կշեռքի գտնվելու վայրի մասին և ցուցանակներ դեպի ընդունարան:

60. Աղբի բեռնաթափումից հետո աղբավայրում պետք է իրականացվեն թափոնների հարթեցման և վերևից հորիզոնական կամ հորիզոնականին մոտ խտացման/տոփանման աշխատանքներ: Խտացումից հետո մակերևույթի բարձրությունը չպետք է գերազանցի 2.0 մ:

61. Աղբի հարթեցումը և խտացումը պետք է իրականացվի աշխատանքային մակերևույթի վրա դրանց բեռնաթափումից անմիջապես հետո, ինչի շնորհիվ հնարավորություն կընձեռվի գոյություն ունեցող տարածքում տեղադրել ավելի մեծ քանակությամբ աղբ, միաժամանակ կվազեցնելով հրդեհների առաջացման, միջատների, վնասատուների և թռչունների կողմից աղբի տարածման հավանականությունը:

62. Աղբավայրերում աղբի հարթեցումն և տոփանումը պետք է իրականացվի բուլդոզերներով կամ տոփանող մեքենաներով:

63. Հաշվի առնելով, որ աղբավայրում կենցաղային կոշտ թափոնների քայքայման ընթացքում միաժամանակ տեղի են ունենում ֆիզիկական, քիմիական և կենսաբանական (կենսաքիմիական) բազմաթիվ պրոցեսներ, աղբավայրերում տեղադրվող թափոնների յուրաքանչյուր շերտ պետք է մեկուսացվի/ծածկվի 20սմ չտոփանված հողի շերտով: Ընդ որում +5C և ավել ջերմաստիճանի դեպքում մեկուսացումն իրականացվում է ամեն օր, իսկ +5C ջերմաստիճանից ցածրի դեպքում՝ ոչ ուշ քան թափոնների բեռնաթափումից 3 օր հետո: Տեղադրված թափոնների օրակա մեկուսացումը/ ծածկումը կկանխի թափոնների և գարշահոտի տարածումը, թափառող կենդանիների, վնասատուների և թռչունների մուտքը, ինչպես նաև կբարելավի աղբավայրի և ակտիվ աշխատանքային տարածքի արտաքին տեսքը:

64. Աղբի մեկուսացման/ծածկման համար կարելի է օգտագործել հողային զանգվածների, կավի նման ոչ ծակոտկեն իներտ նյութեր, ինչի նպատակն է նվազեցնել ջրի մուտքի, ինչպես նաև թորանի առաջացման հավանականությունը: Հնարավորության դեպքում օրական ծածկման համար կարելի է օգտագործել աղբավայրի տարածքում փոսորակների քանդման արդյունքում գոյացած հողային զանգվածը:

65. Ձմռան ամիսներին, հողային շերտի օգտագործման բարդության պատճառով, որպես մեկուսիչ/ծածկող նյութ կարող են օգտագործվել խարամներ, շինարարական թափոններ, կոտրված աղյուս, կրաքար, կավիճ, գիպս, ծովակտոր, բետոն, կերամիկական սալիկներ, ասֆալտբետոն և այլն:

66. +20C և բարձր ջերմաստիճանի դեպքում տեղադրված աղբի շերտերի մեկուսացման աշխատանքներից առաջ պետք է տոփանված աղբը խոնավացնել՝ 1խմ աղբին մինչև 10լ ջրի չափով:

67. Աղբավայրի մուտքի մոտ անհրաժեշտ է ապահովել ջրի և ախտահանիչ նյութերի առկայությունը՝ աղբատար փոխադրամիջոցների թափքերը և անվադողերը յուրաքանչյուր անգամ աղբը թափելուց հետո լվանալու և ախտահանման համար: Լվացումից գոյացող կեղտաջրերը պետք է ուղվեն գտվածքի մշակման համակարգ և օգտագործվեն հակահիդեհային նպատակով թափոնների խոնավացման համար:

68. Պետք է տեղադրել ավտոմոբիլային կշեռքներ և կատարել հաշվառումներ՝ օրական կտրվածքով: Իսկ կշեռքների տեղադրման անհնարինության դեպքում՝ պարտադիր ապահովել տվյալների գրանցման և պահպանման համակարգ՝ հիմնվելով աղբավայր մուտք գործող աղբատար մեքենաների թվի, նրանց ծավալի ու քաշի և թափոնի տեսակի մասին մոտավոր հաշվարկի վրա:

69. Աղբավայրը շահագործող կազմակերպությունը պարտադիր պետք է մշակի աղբավայրի շահագործման պլան, աղբավայրում ընդունման և մերժման ենթակա թափոնների տեսակների ցանկը, վարի թափոնների ընդունման գրանցմատյանը և իրականացնի հսկողություն աղբավայր մուտք գործող թափոնների կազմի նկատմամբ՝ շուրջօրյա ռեժիմով:

70. Համաձայն կազմված ցանկի՝ աղբավայրում տեղադրման ոչ ենթակա թափոնների մերժման դեպքում՝ աղբավայրում կարող է նախատեսվել մերժված թափոնների համար ժամանակավոր պահեստավորման հատուկ տեղամաս, որտեղից մերժված թափոնները կտեղափոխվեն համապատասխան գործածության վայր:

71. Աղբավայրում տեղադրվող աղբի յուրաքանչյուր հոսքը գրանցվում է գրանցամատյանում՝ ստորև ներկայացվող օրինակելի ձևով:

Ամիս, ամսաթիվ, ժամ	Թափոններ ներկրող /կազմակերպություն, ԱԶ և այլն/	Տրանսպորտային միջոցի մանկիշը և պետհամարանիշը	Երթուղին կամ հավաքված թափոնների վայրերի վերաբերյալ տեղեկատվություն	Ընդունվող թափոնների քանակը		Զույմ մերժման ենթակա թափոնների վերաբերյալ /առկայության դեպքում/
				մ ³	Տոննա	

11. Աղբավայրի տարածքի հսկողությունը

72. Աղբավայրի տարածքում հրդեհների կանխարգելման կամ արդեն բռնկված հրդեհի օջախների արագ հայտնաբերման և չեզոքացման, աղբավայրի արդյունավետ շահագործումն ապահովելու նպատակով, այն շահագործողի կողմից իրականացվում է շուրջօրյա հսկողություն:

73. Հսկողության արդյունավետությունն ապահովելու նպատակով այն իրականացվում է աղբավայրի հարակից տարածքում, կողմնակի անձանց համար անհասանելի վայրում տեղադրված տեսահսկման համակարգի միջոցով:

74. Տեսահսկման համակարգի կողմից արձանագրվող տեղեկատվությունը փոխանցվում է աղբավայրը շահագործողի վարչական շինությունում տեղադրված, տեսագրված տեղեկատվության առնվազն մեկշաբաթյա պահպանմամբ հիշող սարքին:

75. Տեսագրման համակարգիս ստացված տեղեկատվության էլեկտրոնային պատճենը տրամադրվում է այլ անձանց ըստ անհրաժեշտության՝ օրենքով սահմանված դեպքերում: